ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՄՈՒՇՆԵՐ ՏԻՐՈՋ ԵՒ ՏԻՐԱՄՈՐ
ՀԱՅԱԲԱՐԲԱՌ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Մեսրոպ Մաշտոց (5-րդ դար)

* * *

Երկնային զորությունների հետ մեկտեղ,

Տիրոջն օրհնեցեք, բոլոր երկրներ

Եվ երկրի բոլոր բնակիչներ:

Սուրբ անունը նրա փառքերի

Գովեցեք երկրեերկիր, մարդկանց որդիք,

Իշխաններ և երկրի դատավորներ:

Ցնծագին երգի ձայնով

Սրբության համար բարեբանեցեք Աստծուն,

Սուրբ եկեղեցու ծառաներ:

* * *

Երկնի հրեշտակները հոգևոր երգով,

Երգի նվագով Քեզ են փառավորում:

Հոգևոր հոտի դասերը երկնային՝

Երգի նվագով Քեզ են փառավորում:

Քո տերությունն ենք շարունակ օրհնում,

Փառավորված ես բարձունքներն ի վեր:

* * *

Օրհնում ենք Քեզ, անսկիզբ Հայր,

Երկնի բարձունքին ամենայն ժամ օրհնության:

Գովում ենք քեզ, միածին Որդի,

Երկնի բարձունքին ամենայն ժամ օրհնության:

Բարեբանում ենք Քեզ, սուրբ Հոգի,

Ամենայն ժամ փա՛ռք Քեզ, Աստված:

Մովսես Խորենացի (5-րդ դար)

* * *

Ուրախացիր, Սրբուհի,

Գաբրիելի ավետումով,

Նա քարոզեց գալուստը

Երկնքի Տեր Արքայի:

Ողջույն քեզ, Մարիամ,

Քեզ վրա սուրբ Հոգին կիջնի,

Եվ բարձրյալի զորությունը

Քեզ կլինի հովանի:

Նա, որ ծնվելու է Քեզնից,

Առաջնորդն է Իսրայելի

Եվ տարածելու է ամենուր

Հզոր Աստծո խոսքն անմահ:



* * *

Ուրախ եղիր, Բերկրյա՛լ,

Ամենասու՛րբ Կույս,

Որ ծնեցիր աշխարհի

Արդարության արեգակը,

Որը լուսավորեց

Մարդկային ազգերը:

Ուրախ եղիր, Բերկրյա՛լ,

Կնքվա՛ծ դուռ,

Որ ծնեցիր աշխարհին

Քրիստոս թագավորին,

Որը նստում է անձեռակերտ

Իր աթոռի վրա:

* * *

Ուրախ եղիր, Մարիամ, սուրբ Աստվածածին,

Որ որովայնիդ մեջ կրեցիր

Տեր Աստծուն մեր հայրերի:

Ուրախ եղիր, Մարիամ, Կույս անարատ,

Որ անպատմելիորեն ծնեցիր Քո Որդուն՝

Տեր Աստծուն մեր հայրերի:

Ուրախ եղիր, Մարիամ, Մա՛յր Քրիստոսի,

Քանզի քեզնից ծագեցրեց մեր երեսի լույսը՝

Քրիստոս Աստվածը մեր հայրերի:

* * *

Ուրախ եղիր,

Անհարսնացյալ Մայր,

Որ մարմնացյալին տիրաբար

Որովայնիդ մեջ կրեցիր:

Ուրախ եղիր,

Անհարսնացյալ Մայր,

Որ անկրելի էությունը

Արգանդիդ մեջ անապականաբար կրեցիր:

* * *

Ուրախ եղիր, Աստվածածին,

Հույս և փրկության Մայր,

Քեզ, ընդունող լույսի,

Մեծարում ենք:

Քեզ, լույս Մայր և Կույս,

Քեզ, գանձդ կյանքի,

Աստվածային ձայնով, ցնծությամբ

Մեծարում ենք:

Անարատ լույսի սուրբ Մայր,

Հրեշտակային օրհնությամբ պատվված,

Քեզ, ընդունո՛ղ լույսի,

Մեծարում ենք:

* * *

Ուրախացիր, Աստվածածին,

Վերօրհնյալդ սերովբեներից,

Քեզնից մեզ լույս ծագեցրիր,

Մայր եղար բարձրացնողին.

Ազգեր ու ցեղեր քեզ ենք մեծարում:

Հիմնը եղար եկեղեցու,

Եղար խորանը սուրբ Հոգու,

Հրեշտակներից սպասավորվեցիր,

Գաբրիելը քեզ ավետեց,

Ազգեր ու ցեղեր քեզ ենք մեծարում:

Հիանալով, տեսնում ենք

Հրաշալի խորհուրդը հայտնված,

Սուրբ Հոգուց հղացած՝

Աստծո էությունը մարմնով ծնեցիր,

Ազգեր ու ցեղեր քեզ ենք մեծարում:

* * *

Աստվածածին սուրբ Կույս,

Անհարսնացյալ Մարիամ,

Որ օրհնյալդ ես կանանցից,

Քեզ ենք օրհնում միշտ,

Արժանավորիդ մեծարում:

Անապական տաճար և առագաստ լույսի,

Քեզ փեսայանալով՝

Քո մեջ կյանքի խորհուրդը բնակվեց,

Քեզ ենք օրհնում միշտ,

Արժանավորիդ մեծարում:

Կենդանի հուրը, որով մորենին վառվեց,

Քո արգանդում անվնաս կրեցիր

Եվ ծնեցիր Աստված և մարդ.

Քեզ ենք օրհնում միշտ,

Արժանավորիդ մեծարում:

* * *

Քեզ, Աստվածածին,

Աղբյուր անսպառ լույսի,

Որ լուսավորում է հավատացյալներին,

Միասնական երգի ձայնով մեծարում ենք:

Դու՝ պարծանք մարդկանց կուսության,

Դու՝ ուրախություն հրեշտակների,

Դու՝ անեծքների հաղթող,

Որի համար, Աստվածածին, Քեզ մեծարում ենք:

Դու՝ ճշմարիտ արևելք՝

Արդարության արեգակի,

Որից ծագեց տիեզերքի փրկությունը,

Միասնական երգի ձայնով մեծարում ենք:

* * *

Լույս, լույսի Մայր

Եվ կենարար էության բնակարան,

Քեզ երանի են տալիս ցեղերն, ազգերն ամենայն:

Մայր ստեղծողի

Եվ բնության կերպը նորոգողի,

Քեզ երանի են տալիս ցեղերն, ազգերն ամենայն:

Լույս ծագեց քեզնից՝

Խավարում նստածներիս համար,

Քեզ երանի են տալիս ցեղերն, ազգերն ամենայն:

* * *

Սյուն լույսի և շուք ամպի, սուրբ Կույս,

Որ ցողեցիր մեզ երկնային ցողով

Քեզ ենք բարեբանում,

Կույս Աստվածածին:

Անկեզ մորենի և հողեղեն սերովբե, սուրբ Կույս

Կյանքի պտուղը քեզանով տվեց մեզ Տերը,

Քեզ ենք բարեբանում,

Կույս Աստվածածին:

Անեծքների վերացնող և մեղքերի քավիչ, սուրբ Կույս,

Որ արարածներից ամենասուրբը բարձեցիր քո գրկում,

Քեզ ենք բարեբանում,

Կույս Աստվածածին:

* * *

Աստվածածին, Մայր լույսի,

Սուրբ Կույս, լուսեղեն տաճար.

Ում երկինքները բավական չէին,

Բնակվեց քո մեջ, քեզնից մարմնացավ:

Քեզ, անհարսնացյալ,

Կանանց մեջ օրհնյալդ,

Որ կրեցիր քո մեջ ամենամեծ բնությունը,

Օրհնությամբ մեծարում ենք:

Ուրախ եղիր, աթոռ փրկության,

Մարդկանց հաստատության հույս,

Օրենքների և շնորհների միջնորդ,

Օրհնությամբ անդադար մեծարում ենք:

Հովհան Մանդակունի (5-րդ դար)

* * *

Անճառելի լույսն աստվածության

Ցնօրինաբար կրեցիր Քո որովայնում,

Մարիամ, Մայր և Կույս,

Օրհնությամբ Քեզ ենք մեծարում:

Առանձնահատուկ լույսից զարհուրեցին

առաքյալների շարքերը,

Մինչդեռ դու քո մեջ կրեցիր բովանդակ հուրն աստվածային,

Մարիամ, Մայր և Կույս,

Օրհնությամբ Քեզ ենք մեծարում:

Առաքյալներին հովանի ամպ լուսեղեն,

Սուրբ Հոգուն հավասար,

Բարձրյալի զորությունը հովանավորած սուրբ Աստվածածին,

Օրհնությամբ քեզ ենք մեծարում:

Սահակդուխտ Սյունեցի (8-րդ դար)

* * *

Սրբուհի Մարիամ, անապական տաճար

Եվ կենարար բանի Ծնող և Մայր.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Անդաստան հոգևոր և համապայծառ ծաղիկ,

Որ քո մեջ հովանավորված հոգեհոս անձրևով

Պտղաբերեցիր Հորից՝ մարդկանց հայտնելով,

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Հաստատություն երկնի և երկրի,

Կենդանությունների բաշխող,

Որ աստվածային լույսի ճառագայթներով վար իջած՝

Նախահորը վերականգնեց անկումից.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Այս երկրում դու երկնային

Եվ վեհագույն քերովբեների հետ երևացիր,

Երկնային զորքերի Տիրոջը

Գրկումդ բռնած կրեցիր.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Կենաց փայտով մեզ բացեցիր ճանապարհ

Դեպի սերովբեներով փակված երկնային պաշտպանությունը.

Եվ բոցեղեն սուրը պարտության մատնեցիր.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Դուռ երկնքի և էջք Աստծո,

Խաղաղության միջնորդ,

Դու արդարացրիր նախամայր Եվայի ծնունդը,

Իշխելով մահին.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Ուրախացի՛ր բերկրյալդ, Տերը քեզ հետ է՝ ասելով,

Հրեշտակների բազմությունները

Հրաշալի ձայնով երգում էին քեզ իրենց բերկրանքը.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Հյութական, աստվածային Բանի բնակարան,

Որ հուրն աստվածության

Քո որովայնն ընդունեցիր և չբոցակիզվեցիր

Երբեմնի մորենու նման,

Այլ ծնեցիր բոլորի Աստծուն.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Խորհուրդ կյանքի և փրկության,

Աշխարհով մեկ վերաթևող,

Հողեղեններիս բարձրացրիր հոգեղենների աստիճանին՝

Հրեշտակների հետ բնակվելու.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Փա՛ռք տվեք

Հավիտենական թագավորի բարձունքներին,

Որ եկավ և մարմնացավ սուրբ Կույսից

Եվ արարածներին փրկեց մեղքերից.

Օրհնյալ ես դու կանանց մեջ,

Բերկրյալ Տիրամայր և Կույս:

Գրիգոր Նարեկացի (10-րդ դար)

(գեղ. թարգմանությունը Վ. Գևորգյանի)

ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴՅԱՆ

Ծավալվել են աչքերը ծով

Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,

Ինչպես երկու փայլակնաձև արեգակներ.

Ծողն է նման լուսացնցուղ այգաբացի:

Թափվում էին այտերից՝ վառ

Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր.

Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում

Հուզավարար կենսատու սեր:

Կամար կապած թևերը գիրգ՝

Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,

Ելևեջներն հյուսում իրար.

Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին:

Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն էր կաթում.

Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահորդ.

Շողում էին նույն կենսավառ

Սիրով չքնաղ ու գինեթույր

Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:

Այդ վարսերը համերամ զա՛րդ, համորեն զա՛րդ,

Ոլորք առած եռահյուսակ՝

Բոլորվել են այտերի շուրջ.

Լուսափայլ է ծոցը, կարմիր վարդով լցված,

Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:

Բուրում էր նա կնդրուկի պես

Աստվածային հրով լցված մի բուրվառի.

Ձայնն էր մեղուշ, քաղցրանվագ:

Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,

Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի

Գույներով էր ոսկեշողում.

Գոտին կամար, արծաթափայլ,

Ոսկետտուն ու նրբակերտ՝

Պաճուճված էր ակնեղենով շափյուղայի:

Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ,

Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտերից:

Քեզ պսակող թագավորին

Ու նորածին այն Փրկչին փա՛ռք

Հավիտյանս հավիտենից. ամեն:

ՏԱՂ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

(հատված)

Ավետիս մեծ՝ սուրբ խորհրդի,

Գաղտնի խորհուրդն հայտնվեց մեզ.

Ավետիս, Հոր լույսն է ծագել

Իր ծոցածին էությունից.

Ավետիս, որ հայտնվեց Աստված

Էակներիս մեջ հողեղեն,

Ավետիս, պետն հրեշտակաց

Գաբրիելն երկիր է ուղարկվել,

Որ ավետիս տա սրբուհուն՝

Դստեր Դավիթ թագավորի.

Ավետիս քեզ, Աստվածամա՛յր,

Ուրա՛խ եղիր, Տերն է քեզ հետ:

Ավետիս քեզ, Աստվածամա՛յր,

Սերովբեի նման անբիծ,

Քերովբեի պես բարձրաթոռ,

Եռյակին մերձ լույս զերազանց,

Որից իջավ բյուրերի մեջ

Լույսի արփին եթերաճեմ,

Ծողշողենի, փողփողենէջ

Մանրահեղեղ գաղտնի շավիղ

Անծանոթի ճանապարհին:

Ավետիս քեզ, Աստվածամա՛յր,

Կույսդ Մարիամ, տաճար Աստծո.

Ավետիս տուր և Ադամին,

Լուծվեց մեղքի անեծքն այսօր.

Ավետիս ձեզ նահապետնե՛ր,

Ձեր անձկալուն ահա տեսաք.

Ավետիս ձեզ մարգարենե՛ր,

Եղավ լրումն օրենքների.

Ավետիս և քե՛զ, Բեթղեհե՛մ,

Երկիրդ Հուդա, Եփրատի տուն:

Ավետիս ծառ-ծաղիկներին

Բողբոջախիտ, սաղարթավետ,

Գեղեցկաթույր, պտուղներով

Ակնահաճո, ախորժահամ,

Զվարթաբույր հոծ-խուռնախիտ

Փթթինազարդ վարդերի փունջ շափրակներին,

Որ բացվել են ոսկեճաճանչ թերթիկներով

Ու կանաչել տերևազարդ...

ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Գոհար վարդն էր շղարշ առել

Արփիական վեհ վարսերից.

Ծավալվում էր հուսկ վերևում, վարսերից վեր,

Ծաղկածիծաղ ծովն երկնային:

Եվ այդ ծովից համատարած

Պղպջում էր գույնն այն ծաղկի երփնափողփող.

Իսկ ճյուղերին հուրհրատում էին հասած

Պտուղները քրքումնաթույր:

Հուրհրատում էին նրանք սիրասնունդ

Հովանու տակ խուռն ու առատ տերևների,

Որ սոսափում էին ինչպես հրաշալի

Դավթի տավիղն աստվածատուր:

Վարդաստանն էր շողարձակում հազարերանգ

Ծիծաղածուփ ծաղիկների երփնախաղով,

Սոսն ու տոսափն էին սփռել այնտեղ բոսոր

Դալարագեղ ոստերն իրենց:

Նոճիներն ու արոսենին նորաբողբոջ

Ծրշում էին հևքով հուշիկ

Գգվելով վարդ ու շուշանին.

Ծողշողում էր շուշանն հովտում,

Ծողում էր դեմն արեգակի:

Հյուսիսային հովն հեզասահ

Հովհարում էր գիրգ շուշանին.

Հարավային լեռները զով

Օդն էր ցողում ջինջ շուշանին:

Ու շուշանն էր լցվում շաղով,

Ծող շաղով ու շար մարգարտով.

Արեգնափայլ ոսկի ամպից

Ծաղն է ցողում ծաղկունքն ամբողջ:

Նշմարվեցին հետզհետե

Աստղերն առկայծ ու դարձդարձիկ,

Լուսինն առան բույլերի մեջ

Ու երկնքի բիլ կամարին համատարած

Հոծ խմբերով շուրջանակի ճառագեցին:

Փա՛ռք Հոր, Որդուն և սուրբ Հոգուն

Այժմ և միշտ հավիտյանս հավիտենից:

Ներսես Շնորհալի (1101-1166)

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,

Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿՈՅՍՆ

Նոր ծաղիկ ցուցաւ ի նորատունկ բուրաստանի,

Նոր արեւ հարաւի

Նորազուարճ առաւօտի:

Երփնատիպ սաղարթ տերեւախիտ կանաչազուարճ

Հողմով Հոգւոյն շարժեալ,

Քաղցրիկ օդով վայրաբերեալ։

Ռախճանայ դրախտն Եդեմայ նոր ծառ կենաց տնկեալ ի նմա

Ի յաբրահամեան

Յեսսեան արմատ դաւթիազարմ։

Սքանչելեօք Կոյսն յրղացաւ զԷմմանուէլն ըստ Եսայեայ,

Ծընեալ զՀօր համագոյն՝

Մեզ համագոյ գոլ ըստ մարմնոյ։

Սիրով խոնարհեցաւ ճըշմարտապէս եւ տիրաբար,

Առնուլ ըզմերս մարմին,

Առանց մեղաց մնալ անմարմին։

Սիրով երկրրպագեա՛, եկեղեցի, ծնեալ արքային.

Փառօք զքեզ պսակողին

Մատո ըզփառս միշտ յաւիտեան։

Խաչատուր Կեչառեցի (1260-1330)

ՏԱՂ ԾՆԸՆԴԻ ԵՒ ՋՐՕՐՀՆԵԱՑ Ի ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Աւրհնեալդ ի կանայս սուրբ Կոյս Մարիամ.

Բանին աստուծոյ տաճար հոգևոր.

Գերագոյն գըտար դասուցն անմահիցն,

Դրախտն իմանալի երկնային տընկոյն։

Երկինք և երկիր քեզ երանիցեն,

Զարկօղըն լուսոյն ի քեզ կըրեցեր։

Էակիցըն Հօր ի քէն մարմնացաւ,

Ընդրեալդ ի բիւրուց ի ծնունդս Եւայի։

Թագ ի գլուխ կանանց, մեծ, զարմանալի,

Ժողովք անմահիցն քեզ սպասաւորին։

Ի մէջ գիշերի շուշան լուսափայլ,

Լոյսն, որ ի հօրէն ի քէն ծագեցաւ.

Խընդա՛, Մարիա՛մ, նորածին մանկամբդ,

Ծընար անաշխատ զանճառ Հօր ծընունդն:

Կամաւ զգուշակեալն ի մարգարէից,

Հոգով յղացար զբարձողն անիծից:

Ձայնիւ ցնծութեամբ զքեզ բարեբանեմք.

Ղամբա՛ր լուսափայլ, մաքրափայլ լուսոյն,

Ճշմարի՛տ ողկոյզ, այգի՛ վայելուչ,

Մարգարի՛տ անգիւտ, ակը՛ն շափիւղայ:

Յեսայի գոչէ՝ Ահայ կոյս յղասցի

Նոր զարմանալի ծնցի Մանուիլ:

Շուշան գեղեցիկ, նարդոս մեծագին,

Ուրախ լե՛ր, բերկրեալ, խու՛նկ անուշահոտ,

Չքնա՛ղ տեսութիւն, լեա՛ռըն վիմածին՝

Պարծանք կուսանաց սուրբ Աստուածածի՛ն:

Ռետին մեզ տըւաւ, դեղ անմահութեան,

Սեղան սրբութեան երկնային հացին,

Վարագոյր եղեք սուրբ եկեղեցոյ,

Տուն և տաղաւար սուրբ երրորդութեան:

Րաբունոյն բանին մայր և աղախին.

Ցնծա՛ Բեդղահէմ, տունըդ Եփրաղայ,

Ի իւթիւ սուրբ հոգոյն լուսաւորեցեր,

Փառաբանեցար ի յարարածոց:

Քրիստոսի փրկչին փառք ի յաւիտեանս:

Հովհաննես Պլուզ Երզնկացի (13-րդ դար)

ՄԵՂԵԴԻ ՊԼԻԶՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ԾՆԸՆԴԷ ԽՈՍՐՈՎԱՅԻՆ

Յանեղական լոյսն անժամանակեայ,

Լոյսն անվայրափակ,

Ի քե՛զ պարագըրի, Մարիա՛մ.

Աւետի՛ս, աւետի՛ս, աւետի՛ս քե՛զ, Տիրամայր։

Ո՛վ նոր խառնումն սքանչելի,

Անեղ ընդ եղումն,

Կուսութիւն և ծնունդ ի քե՛զ ը՛ներգործի, Մարիա՛մ,

Ուրա՛խ լեր, ուրա՛խ լեր, ուրա՛խ լեր, կո՛յս Տիրամայր։

Հաւր Բանին մայր յերկրի,

Կոյս սուրբ՝ տըւողին մեզ հայր՝ յերկինս,

Խոսուն խորան ի քեզ բնակողին, Մարիա՛մ.

Երանի՛, երանի՛, երանի՛ քե՛զ, Տիրամայր։

Այսաւր մեծ զարմանք հրաշից,

Տէրն որդի ծառայի ծնեալ,

Ծառայն որդի ստեղծողին, Մարիա՛մ.

Մա՛յր լուսոյ, մա՛յր լուսոյ, մա՛յր լուսոյ, կո՛յս Տիրամայր։

Նոր պըտուղ բնութեանս հաղցրահամ,

Արմատ նորոյ աշխարհի,

Մահու մա՛ւրը բըժիշկ կենաց, մա՛յր մաքուր, Մարիա՛մ.

Աննըմա՛ն, աննըմա՛ն, աննըմա՛ն, կո՛յս Տիրամայր։

Ի քէն ցընծութիւն մարդկան,

Երկանցն Եւայի լուծիչ,

Ադամայ ազատիչ, Դրախտին բացող դըրան, Մարիա՛մ.

Ցընծացէ՛ք, ցընծացէ՛ք, ցընծացէ՛ք, որդի՛ք Ադամայ։

Սէրովբէ հողանիւթ, հրածին ամպ,

Երկի՛նք՝ արեգականն արդար,

Մայր արքային մեծ, լե՛ր մեզ բարեխաւս, Մարիա՛մ.

Աւրհնեա՛լ մայր, աւրհնեա՛լ մայր, աւրհնեա՛լ մայր, կո՛յս Տիրամայր։

Ի քէն ծընեալ ծեր մանկանն,

Ընդ Հաւրէ՛ւ Հոգւոյն սըրբոյ,

Փա՛ռք և պատի՛ւ յաւիտեա՛նս յաւիտե՛նից.

Աւրհնեցէ՛ք, աւրհնեցէ՛ք, աւրհնեցէ՛ք, որդի՛ք Ադամայ։

Գրիգորիս Աղթամարցի (16-րդ դար)

ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Արքային փակեալ պարտէզ,

Մորենի վառեալ անկէզ,

Գեղմն իմանալի և սէզ

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Բարձող արարչին էից

Նըմանեալ եղեր երկնից,

Պարծանք ամենայն կուսից,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Գարնան առաւօտ եղեալ,

Արեգակն ի քեզ ծագեալ,

Շող և ճառագայթ իջեալ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Դու լուսին յարև մերձեալ,

Լոյսն արեգակնէն առեալ,

Ձխաւար գիշերին մերժեալ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Երևեալ ծաղիկ զարնան,

Վարդ և մանուշակ, շուշան,

Նարդոս ւ ի քըրքում նըման,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ձըրկեալն ի յանճառ յուսոյն

Վասն օձապատիր պըտղոյն,

Կեանք տրուաւ ի քէն նախնոյն,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Էրգ նոր օրհնութեան հընչեն,

Հոյլք հոգէղինացն երգեն,

Հրճուեալ բերկրանօք պարեն,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ընդ անմարմնական զօրաց

Ցընծան դասք տեսանողաց,

Զի կատարեցաւ առածն,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Թէպէտ կամ ի նինջ ւ ի քուն,

Բայց ունիմ ըզսիրտս արթուն,

Վառեալ կամ ի քո սիրուն,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ժամ ի փեսային գալոյ,

Երգեցէ՛ք զերգըս սիրոյ

Վասն ցնծութեան մերոյ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Իջեալ փեսան առ նոսին,

Տեսեալ և ուրախ լինին

Օրիորդք հարսնարանին,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Լուսափայլ ամպ ես թեթև,

Հեղեր ի յերկինս անձրև,

Ետ մեզ զանազան պարգև,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Խորան կազմեցար լուսոյ,

Դու ոսկի բուրվառ խընկոյ,

Քիմք ես հաւատոյ մերոյ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ծառ արմաւենի ծաղկեալ,

Ի տանն աստուծոյ տընկեալ,

Պըտուղ քաղցրահամ բերեալ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Կընդրուկ և զըմուռ հալուէ,

Անճառ հոտ ի քէն բուրէ,

Նիւթ քո ի կենաց ծառէ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Հոտ քո զանազան ծաղկանց,

Գուն առեալ յարեգականց,

Զիս արա՛ լուսաթափանց,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Զայն տուր ինձ, ո՛վ տարփալի,

Մարմինս իմ նուաղեալ մաշի,

Սիրով ծարաւիմ յոգի,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ղամբար վառեալ լուսաւոր,

Խորհուրդ ծնընդեան քո խոր,

Սքանչելի չքնաղ և նոր,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ճոխ և ճառագայթ բազմիս,

Ընդ դասս անմարմնաց հրճուիս,

Փրկեա՛ ի հրոյն զհոգիս,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Մաքուր աղաւնի, տատրակ,

Սիրամարգ ոսկէտեսակ,

Գարնան աւետեաց գուշակ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Յակինթ, դահանակ գունով,

Սարդիոն, յասպիս լուսով,

Շափիւղայ, զըմրուխտ գեղով,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Նըռնենեաց ծաղիկ պայծառ,

Պըտղոյն անմահին դու ծառ,

Ծընար զմիածինն անճառ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Շնորհօք սուրբ հոգոյն ամբիծ

Դու տախտակ աստուածագիծ,

Գուշակեալ մարգարէից,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ուրախ լիցուք մեք ի քեզ,

Ուղղութիւն սիրեաց ըզքեզ,

Կենաց հոտ բուրեալ առ մեզ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Զըքնաղ վայելուչ մարմնով,

Լըցեալ մեծագին իւղով,

Զիս հաստատեսցես յուսով,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Պապակիմ առ քեզ, յոգի,

Հոտ իւղոց ի քէն բուրի,

Հոգիս իմ խանդաղատի,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Զըրհոր կենդանի ջըրոյ,

Զպասքեալ ծարաւիս արբո՛,

Զթըմրեալս ի մեղաց զարթո՛,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ռահին լուսեղէն բացող,

Յառագաստ երկնից բազմող,

Մեզ ողորմութեան տըւող,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Սիրալիր պըտուղըն Յիսուս

Ի քէն կթեցաւ, սուրբ կոյս,

Մեզ միշտ բարեխօս և յոյս,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Վարդ ես, տիրուհի, ծաղկեալ,

Պըտուղ ի ժամու տըւեալ,

Զհացն որ ի յերկնից իջեալ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Տունկ յանմահական դրախտէն

Բուսեալ ծաղկեցաւ ի քէն,

Զմայլեալ արբեցոյց զամէն,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Րամեալ հոտ ծաղկանց բուրեալ

Յանթառամ ծաղկէդ առեալ

Դու ի յարփենից վառեալ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Ցընծա՛ բերկրալի շքեղ,

Լուսին ընդ ոտիւք տրգեղ,

Զգեցար զարեգակն անեղ,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Իւծեալ բնութենէս թափուր

Միայն ընտրեցար մաքուր,

Ընկա՛լ զաղաչանս և լու՛ր,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Փառօք զարդարեալ պրճնին

Օրիորդք հարսնարանին,

Ձերդ ըզբուրաստան ծաղկին,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Քընար քաղցրախօս հընչեն,

Յերգս ի խընճոյս պարեն,

Օրհնութիւնս կուսին երգեն,

Տաճար լուսոյ Մայր սուրբ Կոյս:

Անանուն երգահան



Պետրոս Ղափանցի (170?-1784)

Ծառ խընկաբեր եդեմաբոյս՝

Անթառամ սէր իմ անթառամ,

Աղբիւր կընքեալ ի պարտիզի,

Քաղցրահամ սէր իմ, քաղցրահամ:

Անհրպելի և նորատունկ,

Բուրաստան սէր իմ բուրաստան,

Դալաբեր և լուսազարդ՝

Անդաստան սէր իմ, անդաստան:

Արփիագեղ և ծովային՝

Մարգարիտ սէր իմ, մարգարիտ

Կայծ կարկեհան և դահանակ՝

Ճըշմարիտ սէր իմ, ճըշմարիտ:

Դու ամպ թեթև ըստ երգողին,

Լուսալի սէր իմ, լուսալի,

Անձրևածին և ցողահոս՝

Սքանչելի սէր իմ, սքանչելի:

Հարսն անարատ և թագուհի՝

Երկնաւոր սէր իմ, երնաւոր.

Եւ մարմնեղէն սուրբ սերովբէ՝

Ահաւոր սէր իմ, ահաւոր:

Իմանալի սափոր ոսկի՝

Ցանկալի սէր իմ, ցանկալի.

Ի քեզ լըցեալ սուրբ մանանայն՝

Կենդանի սէր իմ, կենդանի:

Թշուառապէս կորացելոյս՝

Ողորմեա, սէր իմ, ողորմեա՛.

Իբրև ըզմայր յոյժ ողորմած՝

Ա՛յց արա, սէր իմ, ա՛յց արա:

Միսաք Մեծարենց (1886-1908)

ԱՍՎԱԾԱՄԱՐ

«...Ահա կաթիլ մի կաթին

քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ...»

Նարեկացի

Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ,

Մեղեսիկի փոշի մը շուշն ըլլամ ըսփյուռ,

Եվ առիգածն արծաթ՝ ջուրին վրա հոլանի.

Ու ձա՛յն ըլլամ, ըլլամ ծաղիկ, ըլլամ զեփյու՛ռ՝

Ամեն իրի հըպիմ փափուկ թևերով գեջ:

Ըլլամ ջրվեժ, ըլլամ գետափ մը գեղանի,

Ըստվե՛րն ըլլամ խնկագունած այգիներուն,

Կամ գետերու հողմիկ ավաչն, ու գետաձայն

Հովին անցքը՝ երկնասլացիկ կատարներեն:

Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ

Պատկե՛րն ըլլամ սրբազնացած ես համայնին.

Օղամանյա՛կ մ’ըլլամ ես թանկ և անմարմին.

Ու շուշփա մը՝ հաղորդությանըդ կաթնաձիր.

Գետեն անդին կանչե՛ս ինծի. Ամցի՛ր, անցի՛ր.

Մեծ դյութության կայծակ մը տաս մըթար հոգվույս,

Ա՜հ, չըգայթի՛մ կոհակն ի վար ցընորքներուս.

Թող համբուրե՛ աչքըս ջահումն աչքերուդ կույս,

Ու չըգայթի՛մ կոհակն ի վար ցընորքներուս:

Ահա՛ մագլիմ պիտի ցավիս սարակն ի վեր.

Երազներու սատափ ճամբեն ցրվե ամպեր.

Եվ իղձերուս կապույտին վրա, վարդ ամպը դուն,

Վարդ ամպն եղիր՝ մերթ լուսինկան պատմուճանող.

Դու՛ն, աստվածյան գեղեցկության արփավո՛ր հարս,

Սրբության կու՛յսը ձյունաձիր ու հըրավարս:

Գիշերին մեջ կ’իջնե դեռ ուղիսը լուսեղեն,

Կաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութենեն.

Ու տե՛ս, ահա՛, կը մանկանամ, Աստվածամար,

Ու տե՛ս, ահա կը մանկանա՛մ գիշերին մեջ՝

Ուր լըսեցի ես աստվածյան ձայնին վայրէջ՝

Որ կը շաչեր աստվածարյալ հոգվույս համար:

Խաչիկ Մանասելյան (ծն. 1956 թ.)

Աստվածամոր աղոթք



3. Քանզի կամեցար

Մեր հոգու Փրկչին

Ծնել քեզ որդի,

Ծնել քեզ որդի:

Կրկն. Տերը, Տերը, Տերը Քեզ հետ է, Մարիամ:

4. Արդ, թող մայրանան

Եվ որդի ծնեն

Սրբիդ նմանակ

Հոգիներն համայն:

Կրկն. Տերը, Տերը, Տերը Քեզ հետ է, Մարիամ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հիմնական 15 և փոքր 8 վարդարանները կազմելիս Դեսպանորդն օգտվել է Վեհապետների հետևյալ ուղերձներից՝

ՈՒՂԻՆ – Սանատ Կումարա -4, 13 և 15 մարտի, 2005 թ:

ԸՆԹԱՑՔՆ ՈՒՂՈՎ - Սանատ Կումարա -7, 11 և 20 մայիսի, 2005 թ:

ՆՊԱՏԱԿԸ – Սանատ Կումարա – 17 մայիսի, 2005 թ, 15 և 25 հունիսի, 2005 թ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ – Սանատ Կումարա – 15 և 25 ապրիլի, 2006 թ:

ՆԵՐՔԻՆ ՈՒՂԻՆ – Սանատ Կումարա - 4 մարտի և 7 մայիսի, 2005 թ, Էլ Մորիա – 25 մայիսի, 2005 թ, ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ – 5 մարտի, 2005 թ, Սուրբ Միքայել Հրեշտակապետ – 15 հուլիսի, 2006 թ, Ամիտաբհա – 18 մայիսի, 2005 թ, Տեր Սուրիա – 19 մարտի, 2005 թ և 4 հուլիսի, 2006 թ, Լանելո – 24 մայիսի, 2005 թ, Հաութամա Բուդդա – 4 հունիսի, 2005 թ, Հիլարիոն – 16 հուլիսի, 2006 թ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՐՄԱՅԻ ՀԵՏ – Էլ Մորիա – 27 հունիսի, 2005 թ և 19 հուլիսի, 2006 թ, Ազատության Աստվածուհի – 22 ապրիլի, 2005 թ, Տեր Սուրիա – 23 հունիսի, 2005 թ, Հաութամա Բուդդա – 25 դեկտեմբերի, 2006 թ, Աթենաս Պալլաս – 17 ապրիլի, 2005 թ:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ – Հիլարիոն – 10 ապրիլի, 2005 թ, Հիսուս – 8 հունիսի, 2005 թ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ – Մովսես – 1 ապրիլի, 2005 թ, Էլ Մորիա – 21 հունիսի, 2005 թ, Տեր Մայտրեյա – 28 մարտի, 2005 թ, Հիսուս – 5 հունիսի, 2005 թ, Տեր Սուրիա – 14 մարտի, 2005 թ:

ՍԻՐՈ – Անվերապահ Սիրո Ներկայություն – 7 մարտի, 2005 թ, Ջավալ Կհուլ – 18 ապրիլի, 2005 թ:

ՀԱՄԱՅՆՔ – Հաութամա Բուդդա – 3 ապրիլի, 2005 թ, Նիկոլայ Ռերիխ – 9 մայիսի, 2005 թ:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ – Հաութամա Բուդդա – 17 մարտի, 2005 թ, Տեր Սուրիա- 9 մարտի, 2005 թ:

ԶԱՆԱԶԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ – Տեր Շիվա – 1 և 23 հունվարի, 2006 թ, Էլ Մորիա – 21 դեկտեմբերի, 2005 թ:

ՎԵՐԵԼՔ – Տեր Սուրիա – 27 ապրիլի, 2005 թ, Էլ Մորիա – 28 ապրիլի, 2005 թ:

ՍԻՐՏ – Հիսուս - 11 դեկտեմբերի, 2005 թ, Սուրբ Միքայել Հրեշտակապետ – 5 հունվարի, 2007 թ, Տեր Շիվա – 24 հունիսի, 2009 թ, Պաշտելի Ալֆա – 1 հունիսի, 2005 թ, Հզոր Հաղթանակ – 10 հունիսի, 2005 թ, Սանատ Կումարա – 4 մարտի և 20 մայիսի, 2005 թ, Լանելո – 24 մայիսի, 2005 թ, Էլ Մորիա – 25 մայիսի, 2005 թ, Կութհումի – 29 հունիսի, 2005 թ:

ՄԱՅՐ ՄԱՐԻԱՄԻ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՆ – Մայր Մարիամ **-** 8 և 27 դեկտեմբերի, 2007 թ, 4 հունվարի, 9 հուլիսի և 27 դեկտեմբերի, 2009 թ:

ԱՌԱՋԻՆ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 27 դեկտեմբերի, 2007 թ:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 8 դեկտեմբերի, 2007 թ:

ԵՐՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 4 հունվարի, 2009 թ:

ՉՈՐՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 9 հուլիսի, 2009 թ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 27 դեկտեմբերի, 2009 թ:

ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 26 մարտի, 2005 թ:

ՅՈԹԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 13 հունիսի, 2005 թ:

ՈՒԹԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ – 11 հունիսի, 2010 թ:

ԻՆՆԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՓՈՔՐ – Մայր Մարիամ

Հայ քնարերգության նմուշները քաղել ենք հետևյալ աղբյուրներից՝

1. Հայ քնարերգության մատենաշար (ՀՔՄ), Անտիկ շրջանից մինչև Ը դար (գեղ. թարգմ.՝ Լ. Միրիջանյանի), «Խորհ. գրող», Երևան, 1981 թ:
2. Հայ երգի գոհարներ, «Ոսկեփորիկ», «Խորհ. գրող», Երևան, 1982 թ:
3. Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության, Տաղեր» (գեղ. թարգմ.՝ Վ. Գևորգյանի), «Խորհ. գրող», Երևան, 1979 թ:
4. Ներսես Շնորհալի, «Տաղեր և գանձեր», «ՀԽՍՀ ԳԱ հրատ.», Երևան, 1987 թ:
5. ՀՔՄ, Խաչատուր Կեչառեցի, «Տաղեր», «Խորհ. գրող», Երևան, 1988 թ:
6. ՀՔՄ, Գրիգորիս Աղթամարցի, «Տաղեր», «Խորհ. գրող», Երևան, 1984 թ:
7. ՀՔՄ, Պետրոս Ղափանցի, «Բանաստեղծություններ», «Խորհ. գրող», Երևան, 1990 թ:
8. Միսաք Մեծարենց, «Երկերի լիակատար ժողովածու», «ՀԽՍՀ ԳԱ հրատ.», Երևան, 1981 թ:
9. Խաչիկ Մանասելյան, «Երգեր և խոհեր», «Նահապետ», Երևան, 2008 թ:

Վարդարանները կազմեց

Մեծ Սպիտակ Եղբայրության դեսպանորդ

Տատյանա Միկուշինան

Վարդարանների թարգմանությունը՝

Խաչիկ Մանասելյանի

Թարգմանիչն իր խորին երախտագիտությունն է հայտնում

դեսպանորդ ***Տատյանա Միկուշինային*** *և*

Տատյանա Մարտիրոսենկոյին՝ *սույն գիրքը հրատարակման պատրաստելու գործում ցուցաբերած օժանդակության համար, ինչպես նաև ամերիկաբնակ հոգեբան-մանկավարժ*

Լևոն Մոսինյանին՝ *գրքի տպագրության ծախսերն անշահախնդիր ու սիրով հոգալու համար*

Շապիկի ձևավորումը՝

Տ. Մարտիրոսենկոյի և Խ. Մանասելյանի